

Արևային տաք ջրամատակարարման համակարգի աշխատանքային գծագրերի ամփոփագիր

Թերթ	Անվանում	Ծանոթագր.
1	Ընդհանուր տվյալներ: Տաք ջրամատակարարման համակարգի մասնագիր	Ա-1
2	Տաք ջրամատակարարման համակարգի սխեմա	Ա-2

Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

Լիճքի համայնքի մանկապարտեզի տաք ջրամատակարարման համակարգի նախագիծն իրականացված է Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին, ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Լիճքի համայնքի մանկապարտեզը նախատեսված է 75 երեխայի համար: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսվում է իրականացնել պանելային արևային մարտկոցներով և էլեկտրականությամբ: Արևային մարտկոցների հետ նախատեսվում է տեղադրել ծավալային ջերմափոխանակիչ էլեկտրական ջեռուցիչով 300լ տարողությամբ:

Տաք ջրամատակարարման համակարգը երկկոնտուրանի է: Առաջին կոնտուրում ջերմակիրը անտիֆրիզն է, որը տաքանալով արևային մարտկոցներում պղնձե խողովակներով տեղափոխվում է դեպի դրենաժային բաք (պատրաստման նյութը չժանգոտվող պողպատ կամ պղինձ), այնուհետև պոլիպրոպիլենային ջերմափոխանակիչ խողովակներով դեպի ծավալային ջերմափոխանակիչ, որտեղ տաքացնում է երկրորդ կոնտուրի սառը ջրին, որը տաքանալով գնում է շրջանառու բաք, որից հետո դեպի սպառիչներ:

Նախագծում նախատեսվում է տեղադրել 7հատ՝ յուրաքանչյուրը 2մ² մակերեսով արևային պանելային մարտկոցներ:

Հոսանքը կարգավորելու համար նախատեսվում է տեղադրել հոսանքի կարգավորիչ՝ UPS:

Ավտոմատիկան իրականացվում է արևային կարգավորիչի (контроллер) միջոցով: Համակարգում տեղադրվում է նաև ավտոմատ խառնիչ, որը տաք ջուրը խառնելով սառը ջրի հետ ստանում է համասեռ, միշտ նույն ջերմաստիճանի ջուր:

Ամպանած օրերին, երբ արևային մարտկոցներով հնարավոր չէ իրականացնել տաք ջրամատակարարումը, ավտոմատ միանում է ծավալային ջերմափոխանակիչի էլեկտրական ջեռուցիչը:

Արևային տաք ջրամատակարարում

NN	Սարքավորումների և նյութերի անվանումը	Տիպը	Չափման միավորը	Քանակը	Միավորի մասսան
1	2	3	4	5	6
1	Պանելային արևային մարտկոց 2մ ²		հատ	7	
2	Ծավալային ջերմափոխանակիչ էլեկտրական ջեռուցիչով V=300լ		հատ	1	
3	Ընդարձակման անոթ V=30լ		հատ	1	
4	Դրենաժային բաք V=30լ		հատ	1	
5	Ավտոմատ խառնիչ dy20		հատ	1	
6	Ապահովիչ փական P=6բար		հատ	1	
7	Ապահովիչ փական P=3բար		հատ	1	
8	Արևային կարգավորիչ (контроллер)		հատ	1	
9	Շրջանառու բաք V=20լ		հատ	1	
10	Շրջանառու պոմպ G=3000լ/ժամ, H=4մ, N=0.16-0.3կվտ		հատ	1	
11	Շրջանառու պոմպ G=2000լ/ժամ, H=2.0մ		հատ	1	
12	Ավտոմատ օդահան կափույր dy 15մմ		հատ	1	
13	PPR փական dy20մմ		հատ	6	
14	PPR հետադարձ փական dy20մմ		հատ	1	
15	PPR դատարկման փական dy15մմ		հատ	3	
16	Պղնձե խողովակներ Ø22մմ, ներառյալ ձևավոր մասերը		գծ.մ	25.0	
17	Պոլիպրոպիլենային ջերմադիմացկուն խողովակներ d=25x3.5մմ, ներառյալ ձևավոր մասերը		գծ.մ	33.0	
18	UPS 0,8-1,0 կվտ		հատ	1	
19	Անցքի բացում միջհարկային ծածկում Ø100, L=350մմ		հատ մ ³	1 0.003	
20	Ռետինե ջերմամեկուսիչ d=32մմ պղնձե և պոլիպրոպիլենային խողովակները ջերմամեկուսացնելու համար		գծ.մ	58.0	
21	Համակարգի լվացում և փորձարկում		գծ.մ	58.0	
22	Հակասառեցուցիչ հեղուկ (անտիֆրիզ)		լ	51.0	

Ծրագրի առաջադրանք՝ TGQ-02				Լիճքի համայնքի կենտրոնի վերակառուցում մանկապարտեզի տեղակայումով		
				Արևային տաք ջրամատակարարում	ՓՈՒԼ	ԹԵՐԹ
					ԱՆ	Ա-1
				Ընդհանուր տվյալներ: Տաք ջրամատակարարման համակարգի մասնագիր		2
Նախագծ.	Հ. Դուկասյան				<div>ԻՆՖՈՐՄԱՑԻՆԵԼԱԿԱՆ ԵՎ ՈՍԿԱՐԿԱՆ ԵՎՐՈՍ</div>	
Պաշտոն	Ազգանուն	Ստորագր.				